

ՍԱԱԿԻԻ «ԳՈՒԼԵՍԹԱՆ»-Ի ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

Իրանական դասական գրականության խոշորագույն գեմբերից մեկը՝ Շեմս-էզզին Սաադի Շիրազին (XIII դար) իրավամբ մեծ համբավ ու հռչակ է ձևոր բերել ոչ միայն իր հայրենի երկրում, այլև ամբողջ աշխարհում: Գրա լավագույն արտահայտությունը նրա երկերի հրատարակություններն են բազմաթիվ լեզուներով: Սաադիի երկերից հատկապես մեծ տարածում են գտել «Գուլեսթան»-ն ու «Գոլեսթան»-ը: Վերջինս համարվում է նրա ստեղծագործության պսակը:

«Գոլեսթան»-ը արձակ երկ է՝ միահյուսված չափածոյով, բոստորում՝ չափածոյի որոշ մասը զրգած է արարելուն: Այն բաղկացած է առաջաբանից և ութ գլուխներից, որոնցում ամփոփված են հեղինակի երկարատև ճանապարհորդությունների ընթացքում հավաքած ու կուտակած կենսափորձն ու գիտողությունները կյանքի բազմաթիվ երևույթների նկատմամբ, սուր քննադատությունը՝ իշխող հասարակական ու կրոնական շերտերի, ծաղրը՝ թագավորների, պալատականների ու գերվիշների վարք ու բարքի հանդեպ: «Գոլեսթան»-ը ոչ միայն Իրանի, այլև XIII դարի ամբողջ Մերձավոր Արևելքի ֆեոդալական հասարակարգի տարբեր շերտերի կյանքի իրական պատկերն է: Այդտեղ միաժամանակ ցույց է տրված ժողովրդական պայքարը ինչպես տեղական ֆեոդալների, այնպես էլ օտարերկրյա հագնապարհների դեմ: Սաադին առաջին հերթին մեծ նշանակություն է տալիս մարդու հասարակական վիճակին: Նա մարդու գոյության ամենակարևոր երաշխիքը համարում է ազատությունն ու անկախությունը, որոնցով պայմանավորված են նրա հետագա վիճակն ու կյանքը, բարեկեցությունն ու կրթությունը, ուսումն ու գաստիարակությունը, սերն ու երջանկությունը, հաճույքն ու վայելքը:

Անելով իր խորհուրդները, առաջարկություններն ու գիտողությունները կրթության, գաստիարակության, սիրո, երիտասարդության, ծերության և այլ հարցերի մասին, Սաադին այդ բոլորից բխեցնում է իր բարոյախոսությունը՝ կյանքն իզուր չվատնել, շտրվել ունայնություններին ու կրքերին և բույնները գեղեցկացնել լուրջ զբաղմունքներով, լինել խոնարհ, մարդասեր ու համեստ, զինվել գիտությամբ, ունենալ բարոյական քաջություն ու վեհանձնություն: Իր մտորումները Սաադին արտահայտել է հեքիաթների միջոցով, զրանք լրացնելով աֆորիզմներով, առածներով, առակներով, ժողովրդական ասույթներով ու իմաստունների խրատներով:

«Գոլեսթան»-ը, որ հեղինակի վկայությամբ զրգած է 1258 թ., պարսկերեն առաջին անգամ հրատարակվել է 1651-ին՝ լատիներեն թարգմանության հետ միասին, Ամստերդամում, հաջորդ հրատարակությունը կատարվել է 1791-ին՝ Կալկաթայում, իսկ 1824-ին՝ Քալքիդում:

«Գոլեսթան»-ի առաջին թարգմանությունը եղել է ֆրանսերեն լեզվով և հրատարակվել է 1634-ին, Փարիզում: Հաջորդ տարի այն թարգմանվել է գերմաներեն: 1691-ին «Գոլեսթան»-ը թարգմանվում է ռուսերեն, որը, սակայն, չի հրատարակվել: Հետագայում՝ 1857-ին լույս է տեսնում Ստ. Նազարյանցի (Մոսկվա), 1862-ին՝ Կ. Լամբրոսի (Օդեսա) և 1882-ին՝ Ի. Խոլմոգորովի (Մոսկվա) թարգմանությամբ, ավելի ուշ՝ 1922-ին Բելոլինում լույս են տեսնում հատվածներ Բերտելսի թարգմանությամբ: Սովետական շրջանում «Գոլեսթան»-ը ունեցել է մի շարք թարգմանություններ ու հրատարակություններ Մոսկվայում, Ստալինաբադում և այլուր (1949-ին, 1954-ին, 1957-ին, 1958-ին, 1959-ին և այլն): «Գոլեսթան»-ը թարգմանվել ու հրատարակվել է հնդկերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, արաբերեն, իտալերեն, լեհերեն, թուրքերեն, ռումիներեն և այլ լեզուներով, որոնցից յուրաքանչյուրն ունի մի քանի հրատարակություն:

Վ. Կան Նան Ա. Կազեմբեկի, Գ. Օզնարիշինի, Ֆ. Միլլերի, Վ. Վելիչկոյի, Կ. Ֆոֆանովի, Ս. Սամանեցի ռուսերեն թարգմանությունները, որոնք անտիպ են:

րակություն, իսկ րնգհանուր թիվը անցնում է 200-ից: Դրանք բոլորն էլ գիտական հրատարակություններ են՝ առաջարանով, ծանոթագրումներով, վերծանումներով, բառարանով, կազմված այնպիսի հայտնի արևելագետների կողմից, ինչպիսիք են Աղամ Օլեարին², Գևորգի Գենցը, Հաբինգտոնը, Գլադսթինը, Ջեմս Դյուամուլենը, Ջոն Կոքսը, Սիմելեն, Լստվիկը, Շպրենգերը, Գեֆրեմերին, Ֆրանցիս Ջոնսոնը, Նասաու Լիսը, Հենրի Մասսեն, Ջոն Փոլեյթը և շատ ուրիշներ:

Սակայն այս հրատարակությունները բոլորն էլ այս կամ այն չափով ունեն թերություններ՝ բացթողումներ, հավելումներ, աղավաղումներ, տեքստերի, վերնագրերի, հատուկ անունների փոփոխումներ և այլն: Նույնը կարելի է ասել նաև ԹՀՀ հրատարակած հետագա հրատարակությունների մասին, որոնցից լավագույնը Մուհամմեդ Ալի Ֆուրուգիինն է (1936):

Սրանք բոլոր հրատարակությունների մեջ լավագույն բացատրությունները, բառարանները ու մեկնաբանումները կատարել են թուրք բանասերներ Սուրուրին և Սուլիմ (XVI դար), որոնց հրատարակությունները, ի տարբերություն նախորդների, ավելի մանրակրկիտ են ու ամբողջական: Լստ սովետական արևելագետ Ռ. Ալիևի վկայության, «Գուլեսթան»-ի հնագույն և լավագույն ձևագիրը գտնվում է Սովետական Միությունում³: Այդ ձևագիրը մինչև վերջերս հայտնի չի եղել Մաադիի բազմաթիվ ուսումնասիրողներին:

Հայ գրական միտքը նույնպես մեծ հետաքրքրություն է ցուցաբերել գեպի իրանական խոշոր բանաստեղծն ու մտածողը Անշուշտ, Մաադիի միակ կամ առաջին հեղինակը չէ, որ պարսկերենից թարգմանվել է հայերեն: Հայ գրական հասարակայնությանը հայտնի են ինչպես անցյալ, այնպես էլ սովետական շրջանում կատարված թարգմանությունները «Շահնամ»-ից, ուսումնասիրությունները նրա մասին, հայաստի բառակների բազմաթիվ հրատարակություններ տարբեր թարգմանիչների կողմից, Հաֆեզի, Ռուղայի բառակները, գաղելները, բեյթերն ու քասիդները և, վերջապես, Աթթարի սուֆիական ու Մաադիի բարոյախոսական տրակտատները:

Մաադիի թարգմանությամբ զբաղվել են հայտնի թարգմանիչներ Հովհաննես Խան Մասեհյանը, Մեսրոպ վրդ. Մաքսուտյանը, զոկտոր Հարություն Թիրյաբյանը, Հովսեփ Միրզայանը, պրոֆեսոր Ռուրեն Աբրահամյանը, բազմաժանտակ գիտնական Հրաչյա Աճառյանը և ուրիշներ:

Մաադիից թարգմանություններ առաջին անգամ կատարել է Մատվեյ Կամազովը՝ Մաթևոս Ղամազյանը, որը մասնագիտությամբ լինելով ինժեներ, զբաղվել է նաև գրականությամբ: Նա գիտեր արևելյան ու եվրոպական մի շարք լեզուներ: 1831 թ. Թիֆլիսում գինձորական ծառայության մեջ գտնված ժամանակ, Ղամազյանը ուսերին է թարգմանել Մաադիի մի շարք բանաստեղծություններ, որոնցից «Բախիժ»-ը տպագրվել է մի քանի անգամ: Նա այնքան է հրապուրվել Մաադիի պոեզիայով, որ մի բանաստեղծություն է ձոնել նրան⁴:

Մաադիի ստեղծագործությունների ամենավաղ հայերեն թարգմանությանը (մի հատված «Բուսթան»-ից և մի քառյակ) հանդիպում ենք Կալիաթայում հրատարակվող «Աղգասեր» հանդեսի էջերում 1846—1847 թթ.: Հավանաբար այդ թարգմանությունը կատարել է հանդեսի խմբագիր Մ. Գ. Թադիսյանցը: Այնուհետև, կեսդարյա ընդմիջումից հետո, 1901 թ. Թիֆլիսի «Մուրճ» հանդեսում հրատարակվում է Հովհաննես Խան Մասեհյանի թարգմանած մի բանաստեղծությունը: Հաջորդ տարի Թիֆլիսի «Լուսա» երկամյա հանդեսում «Ընտիր մտքեր» խորագրի առակ, ի թիվս Լեսինգի, Շիլլերի, Բալզակի, Նապոլեոնի ասուլիսների, հանդիպում ենք նաև Մաադիի հետևյալ մտքին. «Մարդկանց լեզուները ոչ մի իշխանությամբ չի կարելի շղթայել»:

1904—1905 թթ. «Անահիտ» հանդեսում (Փարիզ) տպագրված են հեքիաթներ և բանաստեղծական հատվածներ «Գուլեսթան»-ից, «Մեմնունն ու կույսը» «Բուսթան»-ից և մի շարք բա-

² Սաքսոնացի գիտնական և ճանապարհորդ Ա. Օլեարին առաջինն է, որ մի քանի տարի շտնվելով Իրանում, պատրաստել է «Գուլեսթան»-ի տեքստի հրատարակությունը գերմաներեն թարգմանության հետ միասին: Սակայն այն չհրատարակվեց, որովհետև 1651-ին լույս տեսավ դարձյալ սաքսոնացի արևելագետ Ե. Գենցի հրատարակությունը լատիներեն թարգմանության հետ միասին: Վերջին հանգամանքը անտեսված է «История литератур народов Средней Азии и Казахстана» (Москва, 1960) գրքի հրատարակիչների կողմից և «Գուլեսթան»-ի նվերը պայման դրած ճանաչումը վերագրված է Աղամ Օլեարիին (տե՛ս էջ 64):

³ Այս ձևագիրը գտնվում է Տաջիկական ՍՍԻԲ ԳԼՍ ձևագրային ֆոնդում (Գուլաներ): Գտնվում է XIII դարի վերջում, Մաադիի մահվանից անմիջապես հետո (տե՛ս Са'ди—Гулистан. Москва, 1950, էջ 15—19):

⁴ Журнал «Сын отечества», Москва, 1837, էջ 429—430 և «Կոմունիստ», Բաքու, 1956, № 127:

նաստեղծություններ Մ. Մաքսուտյանի թարգմանությամբ: Հետագայում՝ 1907—1909 թթ. դարձյալ «Լուսա»-ում տպագրված է 12 հերթաթ «Գոլեսթան»-ից և մեկ հատված «Բուսթան»-ից նույն Մաքսուտյանի թարգմանությամբ:

Քննդիկը իր «Ամենուն տարեցույց»-ի էջերում, սկսած 1910 թ., հաջորդաբար տալիս է Սաադիի ասույթներն ու քառյակները, ինչպես նաև պարսկական ու արևելյան առածներ: Հրանտ և Զապիլ Ասատուրներն ևս իրենց կազմած դասագրքում տեղ են հատկացրել Սաադիի ստեղծագործություններին: 1913—1914 թթ. «Շիրակ» պատկերադարձ օրացույցի էջերում զետեղված են ասույթներ Սաադիից և հատվածներ «Գոլեսթան»-ից (Ալեքսանդրապոլ):

1926 թ. «Զարթոնք» գրական-գեղարվեստական ժողովածուում (Քիֆլիս) հանդիպում ենք մի պատմվածքի «Գոլեսթան»-ի 3-րդ դիվիզի, որ թարգմանել է Ս. Հ. ստորագրությամբ մի անձնավորություն, պրոֆ. Լ. Փիրկոպի էսպերանտո թարգմանությունից: 1927-ին Քեհերանի «Նոր գաղափար» հանդեսում Հովսեփ Միրզայանի թարգմանությամբ տպագրված են մի շարք բանաստեղծական հատվածներ, քառյակներ ու բևեռներ Սաադիի ստեղծագործություններից: Ավելի ուշ, 1930—1935 թթ. «Վերածնունդ» (Քեհերան) շաբաթաթերթում նույն Միրզայանի թարգմանությամբ տպագրվում են մի շարք ուրիշ քառյակներ: 1936 թ. «Ալիք»-ում (Քեհերան) լույս է տեսնում բանաստեղծական մի հատված «Գոլեսթան»-ի առաջաբանից Ա. Ամուրյանի թարգմանությամբ, իսկ 1938-ին՝ «Նավասարդ» (Քեհերան) ժողովածուում՝ թարգմանական հատվածներ «Գոլեսթան»-ի 8-րդ դիվիզի Ա. ստորագրությամբ (Ավագ Մելիք-Վարդանյան): Եվ, վերջապես, 1944—1945 թթ. «Լույս» հանդեսում (Քեհերան) նույն Ա. Մելիք-Վարդանյանի թարգմանությամբ հրատարակվում է երեք հերթաթ «Բուսթան»-ից:

«Գոլեսթան»-ը ամբողջությամբ հայերեն առաջին անգամ լույս է տեսել 1920-ին, Նյու-Յորքում, դոկտոր Հարություն Քիրյաքյանի թարգմանությամբ, որն ավարտված է եղել 1910 թ.: Հաջորդ հրատարակությունը լույս բնծայեց Հայպետհրատը 1958-ին Ա. Մելիք-Վարդանյանի թարգմանությամբ:

«Գոլեսթան»-ի թարգմանիչները՝ Հ. Քիրյաքյանը, Մ. Մաքսուտյանը, Ա. Մելիք-Վարդանյանը, Ա. Ամուրյանը, Հր. Աճառյանը և մյուսները, մեծ ջանք ու եռանդ են գործադրել այդ բարդ ու դժվարին աշխատանքը հաջողությամբ պսակելու համար: Նրանք ձգտել են հարազատ մնալ հեղինակի ոչ միայն ոգուն, այլև ձևին, հիմնականում պահպանելով արձակ ու շափածո հատվածները, գեղարվեստական պատկերները, ներքին հանդավորումը:

Թարգմանությունները, սակայն, առավելությունների կողքին ունեն նաև լուրջ թերություններ: Չնայած թարգմանիչների մեծ զգուշությանն ու բարեխղճությանը, կան մի շարք հատվածների, քառյակների ու բևեռների բացթողումներ, ոչ ճիշտ թարգմանություններ, իմաստի շեղումներ, թերի նախադասություններ, ավելորդ բառեր, լեզվական կանոնների մեղանշումներ, շափածոն արձակի վերածելու դեպքեր և այլն:

Համառոտակի բնության առնենք «Գոլեսթան»-ի երկու ամբողջական թարգմանությունները, որ կատարել են Հ. Քիրյաքյանն ու Ա. Մելիք-Վարդանյանը, Մ. Մաքսուտյանի, Ա. Ամուրյանի, Ա. և Ս. Հ. ստորագրությամբ հանդես եկած հեղինակների կատարած հատվածային թարգմանությունները, որ քաղել ենք հայ պարբերական մամուլի էջերից, ինչպես նաև պրոֆ. Հր. Աճառյանի անավարտ ու անտիպ թարգմանությունը, որը մեր ձեռքի տակ է:

Անշուշտ «Գոլեսթան»-ի թարգմանությունը սոսկ գեղարվեստական կամ բարոյախոսական պատկերներ չի հետապնդել, այլ որոշ շափով՝ բաղաբանական նկատառումներ: «Գոլեսթան»-ում ուժեղ կերպով դրսևորված է հեղինակի վերաբերմունքը տիրող կարգերի, ղեկավարման սխտեմի, հողերի դատի, վարչական մարմինների նկատմամբ, որոնք ենթարկված են սուր քննադատության ու սպանիչ ծաղրի: Հեղինակի այս վերաբերմունքը իրականության նկատմամբ մոտ ու հարազատ է եղել «Գոլեսթան»-ի թարգմանիչների հոգուն:

Ինչ վերաբերում է թարգմանական արվեստին ու տեխնիկային, ապա նրանցից յուրաքանչյուրն ունեցել է իր մոտեցումը: Հ. Քիրյաքյանը ձգտել է նույնությամբ պահպանել ստեղծագործության թե՛ գաղափարական և թե՛ գեղարվեստական կողմը, ինչպես և ամբողջականությունը, մինչդեռ Ա. Մելիք-Վարդանյանը դանդ է առել որոշ հատվածներ, հատկապես շափածո արարներն սողեր, երբեմն շեղվել է բուն մտքից կամ բանաստեղծական շափն ու հանդը պահպանելու համար տողը ծանրաբեռնել է ավելորդ բառերով:

Այսպես, չ. Թիրյաքյանը հեղինակին հարազատ մնալու նպատակով այն բանաստեղծական տողերը (բեյթերն ու քառյակները), որ Սաադին գրել է արաբերեն, թարգմանել է զրաբար: Այդպես են վարվել նաև չ. Աճառյանն ու Մ. Մաքսուտյանը: Այս հանգամանքը թարգմանությանը տվել է առանձնակի հմայք: Ա. Մելիք-Վարդանյանը գիրքն ամբողջությամբ թարգմանել է աշխարհաբար:

Թարգմանիչները յուրովի մոտեցում են ունեցել հատուկ անունների և օտար բառերի տառադարձության հարցում, որովհետև նրանց մի մասը Արևելյան Հայաստանից է, մյուսը՝ Արևմտյան: Օրինակ, Ա. Մելիք-Վարդանյանը գրում է Անվաբի. իսկ Չ. Թիրյաքյանը էնվաբի, կամ՝ Մեհա-Մեհա. ֆարաջ-ֆեբեջ, Մոհամմեդ-Մուհամմեդ, բենի-բիբի, նեմրուզ-նեմրուզ և այլն:

Ինչպես հայտնի է, Արևելքում, նամանավանդ Պարսկաստանում, տարածված ախտերից մեկն է արվամոլությունը կամ, ինչպես ընդունված է ասել՝ «արևելյան հիվանդություն»: Սաադիի ստեղծագործության մեջ ևս որոշ տեղ է զբաղում այդ կարգի երևույթների դուստ նկարագրությունը: Եվ մենք տարբեր հերթերում հանդիպում ենք պատանի տղաների, որոնք դարձել են այս կամ այն շեյխի, զադիի կամ թաղավորազնի սիրո առարկան: Սակայն մեր թարգմանիչները, հատկապես Մելիք-Վարդանյանը, այս հատվածները ենթարկել են որոշ փոփոխության, թերևս պատշաճության համար, հաճախ տղան դարձնելով աղջիկ: Այդ փոփոխությունները մեր կարծիքով տեղին չեն և աղավաղում են հեղինակի տեքստը:

«Գուլեսթան»-ի հայերեն թարգմանությունների մեջ նկատելի են մի շարք շեղումներ, որոնք այս կամ այն չափով ճիշտ չեն վերարտադրում հեղինակի արտահայտած միտքը: Այսպես, Ա. Մելիք-Վարդանյանի թարգմանության մեջ կարդում ենք.

Ով իմաստուն, ի՞նչ է մարդու ճարտար լեզուն բերանում.
Նա մեծ մարդու զանձարանի բանալին է իր տեղում:

Այստեղ իմաստը բոլորովին փոխված է. «ճարտար» բառը ոչ թե լեզվի ածականն է, այլ «մարդ» բառի: Իսկ պարսկերենում բնավ նման բառ չկա, պարզապես «լեզու» է.

زبان در دهان خردمند چیست
کلید در کنج صاحب هنر

Թարգմանիչն անելացրել է «ով իմաստուն», «մեծ մարդու» և «իր տեղում» բառերը և չի թարգմանել در (դուռ) բառը: Ոչ թե «զանձարանի բանալին», այլ «զանձարանի դուռն բանալին»: Իսկ եթե թարգմանչի օգտագործած բնագրում եղել է زبان در دهان ای چیست, ապա սխալ է թարգմանել. «լեզուն, բերանում, ով իմաստուն, ի՞նչ է»: Նույն երկտողը Չ. Թիրյաքյանը թարգմանել է.

Ի՞նչ է լեզուն խելոք մարդու բերնին մեջ,
Գանձարանի դուռն իմաստունին մի կղպանք:

Ընդհանուր առմամբ ճիշտ է, միայն کلید (բանալի) բառը թարգմանված է «կղպանք», մինչդեռ կղպանքը قفل է:

Չ. Աճառյանը միանգամայն հարազատ է մնացել բնագրին.

«Ի՞նչ է լեզուն իմաստունի բերանում
—Մտքի տիրոջ զանձարանի դուռն բանալին: (22/12):

Մի այլ օրինակ.

روز کارم بشد ببادانی
من نکر دم شما خنر بکنید

Ա. Մելիք-Վարդանյանի թարգմանությամբ.

Հարձակվել է մահը անդուծ, հին թշնամին իմ անձի,
Իարևկամներ, իմ մահից ետ զերեղմանիս դար այցի:

Հ. Թիրյաքյանի թարգմանությամբ.

Իմ ժամանակս անցավ, ափսոս, խուլաղին,
Ես չգիտցա, դուք կիր առնել գիտցեք ան (41/33):

Առաջինը ամենևին չի համապատասխանում բնագրին, իսկ երկրորդը ճիշտ է: Ահա և
Մ. Մաքսուտյանի թարգմանությունը, որն ավելի հարազատ է.

Ես շիմացա օրերս ինչպես վերջացան,
Ես հոգս շարի, դուք հոգացեք այդ մասին:

مارا بجهان خوشتر از این یکدم نیست
کز بیک و بد اندیشه و از کس غم نیست

Չյս երկտողը Ա. Մելիք-Վարդանյանը թարգմանել է.

Կյանքն ինձ համար ուրախության մեջ է միշտ,
Հեռու ինձնից լավ ու վատի հոգս ու վիշտ:

Առաջին տողը բոլորովին փոխված է. այլ բան է «աշխարհում ինձ համար այս վայրկյանից
ավելի լավը չկա» և այլ «կյանքն ինձ համար ուրախության մեջ է միշտ»: Հստակ չի վերար-
տադրված նաև երկրորդ տողի իմաստը:

Նույնը Հ. Թիրյաքյանը թարգմանել է.

Զիք մեզ յաշխարհի քան ըզ սույն բոպե քաղցրագույն ու դո՞
Ոչ շար ու բարին մտածել կա և ոչ ուստեք անդո՞:

Մ. Մաքսուտյանի թարգմանությամբ.

Սրանից էլ լավ ինչ բոպե մեզ համար.
Ոչ վիշտ ունենք ոչ մտածմունք լավ կամ շար:

Ինչպես տեսնում ենք, առաջին թարգմանիչը շատ է հեռացել բնագրից, մասամբ շեղվել է
նաև Մ. Մաքսուտյանը, մինչդեռ Հ. Թիրյաքյանը, թեև զրաբար, բայց միանգամայն հարազատ
է մնացել հեղինակին (44/36, 46/38):

Կամ վերցնենք հետևյալ երկտողը.

کوفته در سفره من گومبایش
کوفته را نان تهن کوفته است

Հ. Թիրյաքյանը տվել է այս հատվածի ճիշտ թարգմանությունը.

Մեր սեղանին թող չլինի միս ծեծան
Զի ծեծվածին ծեծած միս է ցամաք հաց:

Այստեղ **کوفته** բառը երկու իմաստ ունի՝ «ծեծած միս» և «ծեծված»: Թե՛ հեղինակը
և թե՛ թարգմանիչը երկու դեպքում էլ **کوفته** — ծեծած ևն դործածել միտումնավոր:

Մինչդեռ Ա. Մելիք-Վարդանյանը բոլորովին հեռացել է բնագրից.

Ախորժահամ քուֆթայից դու մի բարբառիր բնավին.
Գարու հացն էլ քուֆթայի չափ հաճելի է սովածին:

Մելիք-Վարդանյանի թարգմանության 225-րդ էջում կարդում ենք.

«Աշակերտը առանց աշխատասիրության նման է անփող սիրահարի, աստվածային ճանա-
պարհին անտեղյակ ուխտավորի, փետրաթափ թռչունի, գիտությունը չգործադրող իմաստունի,
անպտուղ ծառի, տղետ կրոնավորի և կամ դուռ շունեցող տան»:

Նույն հատվածը Թիրյաքյանը թարգմանել է.

«Անհոժար աշակերտ մը անարժաթ սիրահար մ'է, տեղ չճանչցող ուղևոր մը, անփետուր թռչուն, վարք շունեցող գիտունը անպտուղ ծառ, և անուսում բարեպաշտ մը տուն անպուռ» (Լջ 215):

Մելիք-Վարդանյանի մոտ ամբողջ հատվածը սխալ է թարգմանված. այսպես, «Աշակերտը առանց աշխատասիրության նման է անփող սիրահարին», յավ, սակայն, մնացյալ բոլոր որակումները կամ հատկանիշները նա վերագրել է աշակերտին, մինչդեռ պարսկերենում յուրաքանչյուրն ունի իր առանձին ենթական: Ըստ այս թարգմանության անփող սիրահարը, աստվածային ճանապարհին անտեղյակ ուխտավորը, փետրաթափ թռչունը, գիտությունը չգործադրող իմաստունը, անպտուղ ծառը, տղետ կրոնավորը և գուռ շունեցող տունը, բոլորն էլ վերաբերում են աշակերտին: Այսպիսով, ամբողջ պարբերությունը կազմված է սխալ: Մինչդեռ Քիրյաքյանի թարգմանությունը հարազատ է բնագրին:

Այս կարգի սխալներ, որոնք փոխում են իմաստը, հեռանում հեղինակի արտահայտած մտքերից և թուլացնում խոսքի արտահայտման զեղարվեստական ձևը, շատ կան, բայց բավականանա՞նք նշվածներով:

«Գուրևսթան»-ի թարգմանիչների մոտ տեղ են դրել բազմաթիվ ավելորդ նախադասություններ ու բառեր, որոնց առկայությունը ոչնչով չի նպաստում թարգմանական տեխնիկային կամ արվեստին, նույնիսկ ավելի ձգձգում ու խճողում է միտքը: Անշուշտ, բանաստեղծության փոխադրումը մի այլ լեզվի իրավունք է տալիս թարգմանչին հարկ եղած դեպքում կատարել նաև հավելումներ, ինչպես և որոշ փոփոխումներ, սակայն ոչ իմաստից հեռանալու շարժ և կամ ձրգձգել ու ճապաղել այնքան, որ երբեմն կեսը կամ կեսից ավելին լինի ոչ թե հեղինակին, այլ թարգմանչին: Եթե բանաստեղծական տողերում հաճախ այդ արվում է շափի պահպանման նպատակով, ապա արձակ հատվածներում այդպիսի մոտեցումը ոչնչով չի հիմնավորվում: Բերենք օրինակներ նախ Մելիք-Վարդանյանի թարգմանությունից.

Հետևյալ երկտողը՝

گل خوشبوی در حمام روزی
رسید از دست محبوبی بستم

Մելիք-Վարդանյանը թարգմանել է.

Բաղանիքում մի անգամ (ես մի կտոր) գիլ բուրալից
Ստացա այն (բաղանիքի) սպասավոր ծառայից:

Նախ՝ ավելորդ են փակագծերի մեջ վերցված բառերը և ապա սխալ են «սպասավոր», «ծառա» բառերը, որ վտխարինել են *بوستم*-ին (սիրելի): Նույն տողերը Քիրյաքյանը թարգմանել է.

Ախորժարույր կավի կրտոր մ' ինձ մի օր
Բաղանիքի մեջ մատուցց սիրուն մի կակ.

Այստեղ *محبوب*-ը դարձել է «սիրուն մի կակ»: Մաքսուտյանի մոտ հետևյալն է.

Սիրելիս մի օր ինձ մտերմարար
Բաղնիսում տվեց քաղցրարույր մի կավ:

Այստեղ ավելորդ է «մտերմարար» բառը: Հր. Աճառյանը թարգմանել է.

Բաղնիսում մի օր, քաղցրարույր մի կավ,
Սիրելուս ձեռքից իմ ձեռքը անցավ.

Նույնը Ամուրյանի թարգմանությամբ.

Մի օր բաղնիքում վարդարույր մի կավ,
Մտերմիս ձեռքից իմ ձեռքն անցավ.

Վերջինս *خوشبوی* թարգմանել է վարդարույր, իսկ *محبوب*-ը՝ մտերիմ: Ամենաճիշտը Աճառյանի թարգմանությունն է: Հաջողված են նաև մյուս երեքը, սակայն Մելիք-Վարդանյանի մոտ, ինչպես տեսնում ենք, խճողված է անտեղի բառերով և *گل* բառը չի թարգմանել մինչ-

դեռ մյուս բոլոր թարգմանիչները գրել են կավ: Երկուսն էլ միավանկ բառեր են և սչնչով չի պատճառարանվում բառի նույնությունը պահպանումը (197):

Նման հավելումներ առկա են նաև արձակ տողերում, ինչպես Մելիք-Վարդանյանի, այնպես էլ Քիրյաթյանի թարգմանության մեջ, որոնք բնավ չեն պատճառարանվում (Մ. Վ. թարգմ. էջ 37, 83, 99, 60, 66 և այլն, Քիրյաթ. թարգմ. և էջ 208, 26, 29 և այլն):

«Ճգնավորն սկսեց համեղ կերակուրներ ուտել, նուրբ (ու փափուկ) զգեստներ հագնել, պտուղներ (ու քաղցրավենիք) վայելել և հոտավետ յուղերով օծվել...» (էջ 99): Փակագծերի մեջ առնված բառերն ավելորդ են և միանգամայն անտեղի, փորձենք կարգալ առանց դրանց և նախադասությունը ոչ միայն ոչինչ չի կորցնում, այլև մնում է ամբողջական ու կուռ: Այդպես է նաև պարսկերենը.

عابد طعامهای لذیذ خوردن گرفت و کسوتهای لطیف پوشیدن
واز فواکه مشعوم بوئیدن و در جمال کمینزک نظر کردن

Հետևյալ նախադասության մեջ ինք բառից շորսն ավելորդ է, որոնց առկայությունը ոչնչով չի նպաստում նախադասության և ոչ էլ վերացումը՝ վնասում. «...բայց մի բախիր (երբեք) դուր (չար) թշնամու (քեզ օտար)» (էջ 83):

Մենք չենք խոսում այնպիսի հավելումների մասին, որոնք անհրաժեշտ են և թարգմանիչն ստիպված է հաճախ դիմել այդպիսի միջոցների իմաստն ամբողջացնելու կամ ավելի ճշգրտելու համար: Օրինակ՝ «Ձմեռ ժամանակ էր, և (պալատից շատ էին հեռացել), երբ դիշերը վրա հասավ...» (Մ. Վ. 123): Կամ՝ «նրա մահվան առթիվ (որպես սուղի նշան), պատառեցին իրենց վրայի ցնցոտիքը և փոխարենը մետաքսի ու կերպասի զգեստներ հագան» (127): Առաջին օրինակում եթե չլիներ «Պալատից շատ էին հեռացել» հավելված նախադասությունը, ընդհանուր իմաստը չէր ամբողջանա, իսկ երկրորդում՝ ո՛վ կիմանար, որ հին հազուստը պատուելը և նախ ու բնտիրը հագնելը կարող է սուղի նշան լինել:

Մի քանի օրինակ էլ բերենք Քիրյաթյանի թարգմանությունից.

«Ատորին մարդիկ, երբ կտեսնեն, որ շեն կարող արժանիքով մրցիլ, խնդի, տալանդի աեր մարդոց հետ, կջանան բամբակ, անվանարկել» (էջ 208):

Այստեղ ընդգծված կրկնակի հոմանիշներից մեկականն ավելորդ է և անտեղի:

«...նվ ամեն հնարք նյութեցին, բայց իդուր, սպանել տալու անի» (էջ 29): Այս նախադասությունն ամբողջությամբ ավելորդ է գրված և այլն:

Մարսուտյանի թարգմանության մեջ ևս մի շարք տեղեր կատարված են հավելումներ, որոնց զգալի մասն անհրաժեշտ չէ:

Օրինակ. «...Այս անամոթն հայհոյեց, անպատվեց թագավորին (կարելի՞ բան էր)»: Վերջին մասը՝ «կարելի՞ բան էր» թարգմանիչի կողմից է ավելացված, կամ «Քաղաքի դեմքը խոժոռուկով (դարձավ դրան և) ասաց» (առաջին գլ. հեթ. 1-ին): Այստեղ ևս ավելորդ են «դարձավ դրան» բառերը:

Առաջին գլխի 3-րդ հեթիաթում՝ «Առաջին ձիավորը որ ասպարեղ մտավ, (մեր թղուկն էր և) ասաց». այստեղ ավելորդ է «թղուկ» բառը, պարզապես պետք է լինի «Առաջին ձիավորը որ ասպարեղ մտավ, ասաց»:

Կան նաև հակառակ դեպքեր՝ պարսկերեն կամ արաբերեն ամբողջ հատվածներ, նախադասություններ, քառյակներ ու տողեր չեն թարգմանված: Այսպես, Մելիք-Վարդանյանի թարգմանության մեջ 16-րդ էջում չկա բանաստեղծական երկու տող, 19-ում՝ 14 տող, 21-րդ էջում՝ 12 տող, վերջինս բաց է թողել նաև Քիրյաթյանը, մինչդեռ Աճառյանի մոտ կա: Առաջարանի վերջում ևս (էջ 28) մի քանի տող դուրս է թողնված Մելիք-Վարդանյանի մոտ, սակայն Քիրյաթյանի և Աճառյանի մոտ կա: 43-րդ էջում Մելիք-Վարդանյանը, ինչպես և Քիրյաթյանը, չեն թարգմանել դերվիշի պատասխանը բռնակալ զորապետ Հեջջալ իրն Յուսուֆին. «Եթե մեռնես ժողովուրդը քեզից կաղատվի և դու էլ՝ մեղքերից»: Քերես նրանց ձեռքի տակ եղած պարսկերեն օրինակում ևս այս նախադասությունը արտադրումների ընթացքում դուրս է մնացել: Վերոհիշյալ թարգմանիչների մոտ դուրս են մնացել նաև ամբողջ հեթիաթներ ու հատվածներ (Մելիք-Վարդանյան, էջ 71, 140, Քիրյաթյան, էջ 64, 130 և այլն):

Զգալի թիվ են կազմում նաև առանձին բառերի սխալ թարգմանությունները:

چمان مست کرد բառերը Քիրյաթյանը թարգմանել է «այնպես դժայեցուց», մինչդեռ պետք է լինի «հարբեցրեց», ինչպես թարգմանել է Մելիք-Վարդանյանը (18/16):

عزس

բառը Մելիք-Վարդանյանը թարգմանել է «սիրուհի», իսկ Քիրյաքյանի մոտ ճիշտ է՝ հարս (24/16): **كـ** բառը, որ նշանակում է խարնություն, խարդախություն, ճարպկություն, Մելիք-Վարդանյանը թարգմանել է սխալ՝ ասպատակություն, իսկ Քիրյաքյանը՝ մերենայություն, որն ավելի մոտ է բնագրին (33/25):

رجل բառը Մելիք Վարդանյանը թարգմանել է «այգեգործ», Քիրյաքյանը՝ «ծաղկաբաղ», իսկ Աճառյանը՝ «ծաղկաբար», որը նորաստեղծ բառ է և ավելի հարմար **زجل** -ի իմաստին:

طالم նշանակում է «բռնակալ», մինչդեռ Մելիք-Վարդանյանը թարգմանել է «շարամիտ». իսկ Քիրյաքյանը՝ «անսիրտ», նույն հեքիաթում, մի այլ տեղ «բռնավոր», որը ճիշտ է (61/55): **فقد** Մելիք-Վարդանյանը թարգմանել է թե՛ «կրոնավոր» և թե՛ «աստվածաբան», բուն իմաստն է «իրավադատ» կամ «օրենսդատ», ինչպես թարգմանել է Քիրյաքյանը: Այդպես է նաև բառաբանի բացատրությունը՝ իրավադատ մահմեդականություն: Ուրեմն ճիշտը «աստվածաբան» թարգմանելն է: Կրոնավոր և կրոնադատ կամ աստվածաբան տարբեր իմաստ ունեն. մեկը կարող է կրոնավոր լինել, բայց աստվածաբան չլինել: Ուստի **فقد** բառը «կրոնավոր» թարգմանելը սխալ է:

Ինչ խոսք, որ բառերի մի մասը տեղի և իմաստի համաձայն թարգմանիչներն իրավունք ունեն փոխելու, ինչպես վարվել են հետևյալ օրինակներում. «Դո՛ւները փակ լինեն և պահպանները քնած» (Մ. Վ.—էջ 47): «Դուռ երկրի գոց և զիտողներ բուն» (Ք. Ք. էջ 40): Այստեղ թարգմանիչները ճիշտ են վարվել **فـ** բառը փոխարինելով «պահպան» կամ «զիտող» բառերով: Այդպես են վարվել նաև **رواحر** բառի թարգմանության ժամանակ. կլնելով բովանդակության անհրաժեշտությունից՝ մերթ զրել են եղբայր, բարեկամ և մերթ էլ սիրելիս (21/12, 30/22—148 117, 141/131 և այլն): Նույնը նաև **كـ** բառը (152/142) բացատրաճշտության Մելիք-Վարդանյանը թարգմանել է «երիտասարդ», իսկ Քիրյաքյանը՝ «մյուսը»:

Ինչպես ցույց են տալիս վերը բերված օրինակները, թարգմանիչները հաճախ բաճաճ փոփոխության են ենթարկել բառերի իմաստը, հեռանալով հեղինակի տեքստից, իսկ երբեմն էլ կլնելով բովանդակությունից, կատարել փոփոխումներ, որոնք ոչ միայն թույլատրելի են, այլև անհրաժեշտ: Մենք բնավ այն կարծիքին չենք, որ թարգմանությունը բառ առ բառ պետք է նույնը լինի, միայն այդ փոփոխումները կամ հավելումներն ու կրճատումները պետք է նպաստեն թարգմանության որակի բարելավմանը և ոչ թե ձգձգեն, ճապաղեն կամ կրճատեն ու աղավաղեն բովանդակությունը:

Թարգմանական արվեստն ունի այնպիսի բարդություններ ու նրբություններ, որոնք միայն թարգմանության ընթացքում են ի հայտ գալիս և կամ թարգմանությունը քննության ենթարկելիս սակայն սովորական ընթերցման ժամանակ հաճախ նկատելի չեն: «Գոյեսթան»-ի թարգմանիչները պետք է հարկադրաբար մի շարք բառեր պահպանեին նույնությամբ և իրավամբ այդպես էլ վարվել են, թողնելով՝ օրդերենը, ջալալի, քյարին, սուֆի, դրև, հաջի, պերվիշ, շեյխ, ռամազան, ոտբատ և այլ բառեր, որոնց թարգմանությունն անհնար է և անտեղի: Որոշ բառեր էլ թողել են նույնությամբ պահպանելու համար արևելյան ոճը, կոլորիտը, ինչպես՝ Լմիր, վեղիր, իմամ, մուղին, սուլթան, ֆեթհա, դամմե, զենար, գիրհեմ, դասիզե, բեյթ, հեջադ, խորասան, օշաղ և այլն, որոնց մի մասը պաշտոններ են, մյուսը՝ ձայնանիշներ, դրամներ և բանաստեղծական ձևեր ու երգերի տեսակներ: Բայց բառերի զգալի մասը, որ ոչ միայն կարելի էր թարգմանել, այլև անհրաժեշտ էր, չի թարգմանված, օրինակ՝ խաթիր (քարոզիչ), մոհթասեր (ուսուկան), դուլամ (ծառա), դադի (դատավոր), սադի (մատուցիչ), ջահել (երիտասարդ), գիլ (կավ), թեքի (մենաստան), նշտարի (դեղ), նավադ (նավավար), նասրանի (քրիստոնյա), արաֆ (քավարան), քաշտի (նավ), մուսհաֆ (դուրան) և շատ ուրիշներ: Սրանք առկա են և՛ Մելիք-Վարդանյանի, և՛ Քիրյաքյանի մոտ:

Մեր ձեռքի տակ եղած ինչպես ամբողջական, այնպես էլ հատվածային թարգմանությունների մանրադնին քննումը իրավունք է տալիս ասելու, որ թարգմանիչները մեծ և լուրջ աշխատանք են կատարել, մի աշխատանք, որ կապված է բաղադրաբանի զգալիությունների ու բարդությունների հետ: Սաադիի թարգմանությամբ դրադվողները բոլորն էլ հայտնի են որպես լավ պարսկադեպտներ և հմուտ թարգմանիչներ, բայց չնայած դրան, ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, ունեցել են լուրջ վրիպումներ՝ բացթողումներ, կամսփին հավելումներ, սխալ թարգմանություններ և այլն:

«Գոյեսթան»-ի երկու ամբողջական թարգմանությունների համեմատությունը ցույց է տալիս, որ Քիրյաքյանը ավելի զգույշ է վարվել և աշխատել է որքան կարելի է հարազատ մնալ

րնագրին, հեղինակի լեզվա-ուճական յուրահատկությանը, մինչդեռ Մելիք-Վարդանյանը ավելի ազատ է աշխատել, որի ընթացքում բաց է թողել մի շարք հատվածներ, հատկապես արարերեն բեյթեր և իմաստություններ, որոնց թարգմանությունը կարոտ է ավելի մեծ աշխատանքի, ձրգ-ձրել է նախադասությունները, կրկնապատկել չափածո տողերը:

Ինչպես արդեն ասվեց, «Գոլեսթան»-ի թարգմանությամբ զբաղվել են նաև Մեսրոպ Վ. Մաքսուտյանը, ակադեմիկոս Հր. Աճառյանը, Ա. Ամուրյանը և ուրիշներ: Չնայած սրանց թարգմանությունները հատվածային են, բայց որոշակի է մոտեցումն ու թարգմանական որակը:

Մեսրոպ Վ. Մաքսուտյանի թարգմանություններից մեկ հայտնի են մի քանի հեքիաթներ և առանձին հատվածներ տարբեր գլուխներից, որոնց հանդիպել ենք «Անահիտ» հանդեսում (Փարիզ) և «Լուծա» ամսագրում (Քիֆլիս): Թարգմանություններն ընդհանուր առմամբ կատարված են բնագրին հարազատ, զրեթե զերծ են ձգձգումներից և ավելորդություններից, որոշ տեղեր պահպանված է ներքին հանգավորումը, նույնիսկ արձակ էջերում, մի բան, որ շատ բնորոշ է պարսկերենին:

Ակադեմիկոս Հր. Աճառյանի թարգմանությունը միանգամայն հարազատ է բնագրին, պահպանված են պարսկական պոեզիայի համն ու հոտը: Մնում է աստուսալ: որ հեղինակի բազմազրգվածությունը թույլ չտվեց ամբողջացնել և հրատարակել այն: Մեր ձեռքի տակ եղած հատվածները թույլ են տալիս ենթադրելու, որ այդ թարգմանությունը «Գոլեսթան»-ի թարգմանությունների պսակը կհանդիսանար:

Հատկանշական է, որ Սաադիի թարգմանիչները տարբեր բնագավառների ու մասնագիտությունների մարդիկ են՝ Շեքսպիրի հայտնի թարգմանիչ Հովհաննես Խան Մասեհյան, վարդապետ Մեսրոպ Մաքսուտյան, բժիշկ Հարություն Քիրյաքյան, խոշորագույն լեզվաբան Հրաչյա Աճառյան, արևելագետ Թուրեն Արրահամյան և ուրիշներ: Սակայն, շնայած այսպիսի բազմազանության, բոլորին էլ հավասարապես հետաքրքրել և հուզել են Սաադիի ինչպես արձակ-բարոյախոսական հատվածները, այնպես էլ չափածո-լիրիկական բանաստեղծությունները: Այսպես, Քեհ-րանից Փարիզ, Փարիզից Պոլիս, Պոլսից Կալկաթա, Նյու-Յորք, մինչև Քիֆլիս ու Ալեքսանդրապոլ, սկսած անցյալ դարի 40-ական թվականներից Սաադին խոսում է նաև ընթերցողի հետ, թափանցում նրա հոգին ու սիրտը, դառնում նրա սիրած ու գնահատած բանաստեղծներից մեկը:

АРМЯНСКИЕ ПЕРЕВОДЫ «ГОЛЕСТАНА» СААДИ

А. М. МИНАСЯН

(Резюме)

Один из крупнейших представителей иранской классической литературы XIII в. Шемседдин Саади Ширазский по праву приобрел большую славу и известность не только у себя на родине, но и на всем Востоке, в Европе и в России. Наиболее показательным этого являются многочисленные издания его произведений, многоязычные переводы и исследования.

«Голестан» имеет более чем 200 переводов почти на всех языках мира, которые сделаны известными востоковедами. Армянская литературная мысль также проявила большой интерес к крупному иранскому поэту и мыслителю, переведя ряд его стихотворений и отдельные отрывки из «Бустана» и «Голестана». В этом деле участвовали известные переводчики Ованес Хан Масеян, Месроп архимандрит Максудян, доктор Арутюн Тирякян, Овсеп Мирзаян, профессор Рубен Абраамян, высокозаслуженный ученый Грачя Ачарян и другие.

Самые ранние переводы Саади на армянский язык встречаем на страницах издаваемого в Калькутте журнала «Азгасер» в 1846—47 гг. Затем в Тифлисе в 1901 г. в журнале «Мурч», в 1902, 7, 8, 9 гг. опять в Тифлисе в журнале «Лума», в 1904 г. в Париже в журнале «Анант». Теодик на страницах «Аменун тарецуйцы», начиная с 1910 г., периодически издает четырехстишия и изречения Саади, а в 1913—14 гг. на страницах иллюстрированного журнала «Ширак» помещаются изречения Саади и отрывки из «Голестана». Переводы Саади появляются в учебнике, составленном Грантом

и Запел Асатурами (Стамбул, 1925), в литературном сборнике «Зартонк» (Тифлис, 1926), в тегеранском журнале «Нор-гахпар» (1927), в еженедельнике «Верацунд» (1930—35), в газете «Алик», в сборнике «Навасард», в журнале «Луйс» и т. д. Впервые полный перевод «Голестана» был издан в 1920 г. в Нью-Йорке в переводе Арутюна Тирякяна. В Ереване в 1958 г. «Голестан» вышел второй раз, в переводе А. Мелик-Варданяна.

Тщательное исследование переводов «Голестана» позволяет заключить, что А. Тирякян подошел более осторожно и постарался по возможности остаться верным языку, стилю и особенностям автора, а также сохранить чистоту армянского языка. тогда как Мелик-Варданян поступил более свободно: он пропустил ряд частей (отрывков), затянул предложения, удвоил стихотворные строки. В употреблении синонимов, эпитетов и разновидностей Тирякян более непринужден, его словарный запас богат и обилен, мысли выражены точно, сжато и красиво.

Имеются переводы отрывков «Голестана», сделанные М. Максудяном, акад. Гр. Ачаряном, А. Амурияном и другими. В частности, неопубликованный неполный перевод Ачаряна совершенно соответствует оригиналу, выразителен и поэтичен.